



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

«16» մայիս 2022թ.

N 337

Մեկից ավելի հիմքով վճարած դրոշմանիշային վճարների վերադարձի վերաբերյալ

Հարց

Ֆիզիկական անձը աշխատում է երեք տարբեր ընկերություններում և երեք տեղից էլ իր անունից փոխանցումներ են կատարվում «Զինծառայողների ապահովագրության հիմնադրամին» (1000+ հիմնադրամը): Հնարավո՞ր է հետ ստանալ հիմնադրամից մեկից ավելի վճարած դրոշմանիշային վճարները:

Պատասխան

«Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» 29.12.2020թ. ՀՕ-502-Ն օրենքի 5-րդ հոդվածին համապատասխան «Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածը շարադրվել է նոր խմբագրությամբ, որով 2021 թվականի հունվարի 1-ից սկսած հաշվետու ժամանակաշրջանների համար վճարման ենթակա դրոշմանիշային վճարների մասով՝ մեկից ավելի հիմքով վճարված դրոշմանիշային վճարը հետ ստանալու դրույթներ չեն սահմանվել:

Միաժամանակ, «Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի՝

- 13-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եթե նույն օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 2-րդ, 5-րդ և 6-րդ կետերում նշված անձինք եկամուտներ են ստանում հարկային գործակալից, ապա այդ անձինք դրոշմանիշային վճարը վճարում են բացառապես հարկային գործակալի միջոցով,

- 14-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հարկային գործակալները յուրաքանչյուր ամիս նույն օրենքի 12-րդ հոդվածով սահմանված չափերով հաշվարկում են տվյալ ամսվա համար դրոշմանիշային վճարների չափը՝ հիմք ընդունելով տվյալ ամսվա համար հարկային մարմին ներկայացված եկամտային հարկի և սոցիալական վճարի ամսական հաշվարկում ներառված վարձու աշխատողներին հաշվեգրված աշխատավարձը և դրան հավասարեցված վճարումները և (կամ) քաղաքացիաիրավական պայմանագրերով ծառայությունների մատուցման (աշխատանքների կատարման) դիմաց ֆիզիկական անձանց վճարված եկամուտները,

- 14-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձի մասով տվյալ ամսվա համար հաշվարկված դրոշմանիշային վճարի գումարը հարկային գործակալը պահում է այդ հարկային գործակալից տվյալ անձի կողմից տվյալ ամսում ստացման ենթակա (ստացված) եկամուտներից:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ հայտնում ենք, որ միաժամանակ մեկից ավելի հարկային գործակալների կողմից աշխատանքային և (կամ) աշխատանքների կատարման կամ ծառայությունների մատուցման քաղաքացիաիրավական պայմանագրերի հիման վրա ֆիզիկական անձի ստացած (ստացման ենթակա) եկամուտներից դրոշմանիշային վճարը պահվում է յուրաքանչյուր հարկային գործակալի կողմից՝ անկախ մյուս հարկային գործակալների կողմից նույն ֆիզիկական անձին հաշվեգրած (վճարած) եկամուտներից դրոշմանիշային վճար պահելու հանգամանքից:

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ